

<<ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-Ի
2022Թ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ
/Ա Մ Փ Ո Փ Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն/

Քոլեջն իր աշխատանքային գործունեությունն իրականացնում է կանոնադրության հիման վրա, որը հաստատված է ՀՀ կառավարության 2002թ. հունիսի 20-ի թիվ 1009-Ն որոշմամբ: Քոլեջն իր առաքելությանն ու ռազմավարական ծրագրին համահունչ իրականացնում է մասնագիտական ծրագրերի ուսուցում միջին և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրերով ինչպես առկա, այնպես էլ հեռակա:

Քոլեջն իր գործունեությունն իրականացնում է թափանցիկ՝ համագործակցելով հասարակության տարբեր ոլորտների հետ: Համագործակցություն է իրականացվում ներքին /դասախոսներ, ուսանողներ/ և արտաքին /գործատուներ, ծնողներ, դպրոցների աշակերտներ, քոլեջի գործունեությամբ հետաքրքրված անձինք, կազմակերպություններ.../ շահառուների հետ՝ նրանց ընդգրկելով քոլեջի կառավարման և կրթական գործընթացներում: 2022թ. ընթացքում տարածաշրջանում տարբեր ոլորտների գործունեություն իրականացնող մոտ 50 կազմակերպություններ համագործակցել են քոլեջի հետ՝ աջակցելով արտադրական, առանց տեսական ուսուցման և նախաավարտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործում: Կազմակերպությունների հետ կնքվել են ժամկետային պայմանագրեր /եթե պայմանագիր կնքված չի եղել և/կամ ժամկետն է լրացել/, որոնց հիման վրա կազմակերպվել է պայմանագրով հաստատված գործընթացը: Քոլեջի համապատասխան աշխատակիցները մշտապես սերտ կապի մեջ են ուսանողների, նրանց ծնողների հետ և հետևողական են հաճախումների հանդեպ: Յուրաքանչյուր բացակա ուսանողի մասին տեղեկացվում է ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենին, այնուհետև տնօրենին ուղղված գրավոր դիմումի համաձայն՝ բացակայությունը համարվում է հարգելի: Անհարգելի բացակայությունների թույլատրելի ժամաքանակը լրանալուց հետո չհաճախող ուսանողի վերաբերյալ տվյալները փոխանցվում են ԿՏԱԿ /հիմք՝ 11.02.2021թ. թիվ 154-Ն որոշում/, որից հետո հեռացվում է քոլեջից՝ հիմք ընդունելով քոլեջի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը և համապատասխան պատասխանատուի կողմից տնօրենին ուղղված գրավոր զեկուցագրը:

2022թ. ընթացքում աշխատանքի է ընդունվել և քոլեջի ներսում այլ աշխատանքի է փոխադրվել 23 աշխատակից, 20-ն էլ ազատվել են աշխատանքից տարբեր պատճառներով /հիմնականում աշխատանքային պայմանագրի ժամկետի լրանալու հիմքով/ կամ ներսում տեղափոխվել են այլ աշխատանքի: Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգը՝ դասախոսների թափուր տեղերը համալրվել են մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնագետներով: Մրցույթները կազմակերպվել և անց են կացվել բացառապես վերը նշված հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան: Նոր ուսումնական տարվա սկզբին ևս քոլեջը համալրվել է երիտասարդ դասախոսներով՝ լրացնելով մասնագետների շարքը:

2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին քոլեջն ունեցել է ուսանողների և արտահոսք, և ներհոսք, ինչպես նաև ավարտ և ընդունելություն: Այսպես. Նշված ժամանակահատվածում.

- քոլեջից հեռացվել են 42 ուսանողներ, որից 17 ուսանող միջին մասնագիտական կրթությամբ, իսկ 25-ը՝ նախնական / արհեստագործական /:

-15 ուսանողի տրվել է տարկետում՝ ՀՀ ազգային բանակ գորակոչվելու կապակցությամբ, որից 14 ուսանող միջին մասնագիտական կրթությամբ, իսկ 1-ը՝ նախնական / արհեստագործական /:

- 5 ուսանող տեղափոխվել է այլ ուսումնական հաստատություն՝ կրթությունը շարունակելու նպատակով, որից 3 ուսանող միջին մասնագիտական կրթությամբ, իսկ 2-ը՝ նախնական / արհեստագործական /:

-Ուսանողական իրավունքները վերականգնել է 17 ուսանող, որից 13 ուսանող միջին մասնագիտական կրթությամբ, իսկ 4-ը՝ նախնական / արհեստագործական /: Քոլեջը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ՀՀ ԿԳՄՍ նախարարություն հաշվետվություն է ներկայացնում տվյալ կիսամյակի ընթացքում վերականգնված ուսանողների մասին՝ ՀՀ ԿԳՆ 2011թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1278-Ն հրամանի համաձայն:

-Ուսումնական տարվա ավարտին քոլեջում կազմակերպվել և անց են կացվել պետական ամփոփիչ ստուգումներ՝ հիմնվելով ՀՀ ԿԳ նախարարի 2006թ. հուլիսի 21-ի թիվ 638-Ն հրամանին: Արդյունքում կրթությունը ավարտել և համապատասխան որակավորում են ստացել 111 ուսանող, որից 66 ուսանող միջին մասնագիտական կրթությամբ, իսկ 45-ը՝ նախնական / արհեստագործական /: Միջին մասնագիտական կրթությամբ 66 ուսանողներից 57 ուսանող ավարտել է առկա կրթությամբ, իսկ 9 ուսանող՝ հեռակա: 2022թ. քոլեջի բարձր առաջադիմությամբ շրջանավարտներից 21-ը իրենց կրթությունը շարունակում են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ պահպանելով ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 8-ի թիվ 752-Ն որոշումը: 2022թ. շրջանավարտներից 44-ը տեղավորվել են աշխատանքի, որոնցից 34-ը իրենց մասնագիտությամբ, իսկ 31 ուսանող գորակոչվել է զինվրական ծառայության:

2022թ. հուլիսի 20-ից կազմակերպվել է ընդունելության գործընթացը՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18 հուլիսի 2022թ. N 1317-Ա/2 և 15-ը հուլիսի 2022թ. N 1312-Ա/2 հրամանների: Ընդունելությունը կազմակերպվել է օնլայն տարբերակով՝ dimord.emis.am հարթակի միջոցով՝ պահպանելով ընդունելության կարգի դրույթները: Մրցութային կարգով քոլեջ են ընդունվել ընդհանուր թվով 127 ուսանող, որից 86 ուսանող միջին մասնագիտական կրթությամբ, իսկ 41-ը՝ նախնական / արհեստագործական /: 24 հոկտեմբերի 2022թ. N 1931-Ա/2 հրամանի համաձայն 2022թ. հոկտեմբերի 26-ից կազմակերպվել է հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը օնլայն տարբերակով՝ dimord.emis.am հարթակի միջոցով՝ պահպանելով ընդունելության կարգի դրույթները: Մրցութային կարգով քոլեջի հեռակա ուսուսման բաժին են ընդունվել ընդհանուր թվով 13 ուսանող:

2021թ. համեմատությամբ, 2022թ. միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության արդյունքները ավելի արդյունավետ էին. 23 ուսանող ավել է ընդունվել, իսկ նախնական մասնագիտական / արհեստագործական / կրթական ծրագրով՝ 21 ուսանող պակաս, որը պայմանավորված է տարածաշրջանից մեծ արտագաղթով: Հեռակա ուսուցման համակարգում, ի տարբերություն նախորդ տարվա /2021թ., երբ ընդունելություն չկատարվեց/, այս տարի քոլեջ ընդունվեց 13 դիմորդ:

2021թ-ից նախնական մասնագիտական / արհեստագործական / կրթության համար նախնական ներդրված էլեկտրոնային մատյանները արդիականացվեցին և համապատասխանեցվեցին նախնական մասնագիտական / արհեստագործական / կրթական ծրագրերին:

Միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթությամբ առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստ նշանակելու համար հանձնաժողովը առաջնորդվեց նրանց նախորդ կրթական ծրագրերի առաջադիմությամբ, քոլեջի միջին մասնագիտական կրթության երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների համար հիմք ընդունվեց նախորդ ուսումնական տարվա առաջադիմության արդյունքները, իսկ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողները, ովքեր ընդգրկված են եղել ուսանողական նպաստի համակարգում, ստանում են պետական կրթաթոշակ:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի ևս, ապրիլ ամսին, ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվեցին դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների մեթոդական վերապատրաստման դասընթացները հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2014թ-ի հոկտեմբերի 29-ի թիվ 1058-Ն հրամանը: Քոլեջի կարիերայի ուղղորդման պատասխանատուն մասնակցեց վերապատրաստման դասընթացին: Քոլեջի ներկայացուցիչները մասնակցել են նաև ԷՐԱԶՄՈՒՄ-ի կողմից կազմակերպված հանդիպումներին, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված քննարկումներին:

Քոլեջի նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության մասնաշենքում կատարվեցին որոշակի բարեկարգման աշխատանքներ: Նոր ուսումնական տարվա մեկնարկին քոլեջի գրադարանային ֆոնդը համալրվեց հանրակրթական առարկաների դասագրքերով՝ Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի միջնորդությամբ, որը և էլեկտրոնային հարթակում համակարգում է գրադարանի աշխատանքները: Գրադարանային ֆոնդը համալրվել է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից թողարկված մասնագիտական ուսումնական ձեռնարկներով:

Քոլեջի նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության մասնաշենքում տեղադրվեցին տեսախցիկներ: 2022թ. Քոլեջի հիմնական միջոցները համալրվեցին 10 նոր համակարգիչներով, համակարգչային տեխնիկայով և մեկ նոթբուքով:

Ստորև ներկայացնում են քոլեջի 2022թ. դրամական միջոցների շարժը /մուտքերն ու ելքերը/ աղյուսակի տեսքով՝ ըստ ֆինանսավորման ծրագրերի.

Այլ ծախսեր

h/h	Միջին մասնագիտական		Նախնական /արհեստագործական/ պետ. Բյուջե /հազար դրամ/
	Պետ. Բյուջե /հազար դրամ/	Արտաբյուջե /հազար դրամ/	
Դրամական միջոցների մնացորդ տարեսկզբին	4559.9	56.5	0
Ընթացիկ տարվա մուտքեր	71299.6	2857.6	35052.6
Այդ թվում՝			
Այլ նպաստներ բյուջեից	71299.6		35052.6
Ծառայությունների մատուցումից այլ		2857.6	

աղբյուրներից			
Ընթացիկ տարվա էլքեր այդ թվում	74240.8	2851.3	35052.6
Այդ թվում՝			
Ներքին գործուղումներ	408.0		
Աշխատավարձ	51825.8	2246.2	25913.8
Այդ թվում՝			
Հատկացում բյուջեին /եհ/	15235.2	597.1	6488.4
Հատկացում բյուջեին /նպ. Սոց.աշխ. +գործ. մինչև 2 տ. Եր. Խն./	1212.0		448.5
Հատկացում բյուջեին /դրոշմ. Գործ. + աշխ./	1608.5		724.5
Ծառայություն	1996.0		1135.4
Այդ թվում՝			
Էլ. էներգիա	585.6		315.4
Գազ	793.7		649.3
Կապ	578.9		130.8
Ջուր	37.8		39.9
Այլ ծառայություն	583.5	8.0	68.3
Այդ թվում՝			
Համակարգչ. Ծառ.	155.0		
Տեղեկատվ. Ծառ.	174.64		
Մասնագիտ. Ծառ.	89.9		8.3
Մեք. Սարք. Ընթ. Նոր. և պահպան.	98.0		
Պարտադիր վճար.	66.0	8.0	60.0
Ապրանք	1371.8		273.75
Այդ թվում՝			
Գրասենյ. նյութեր	478.5		73.75
Վերապ. նյութեր	195.2		
Կենցաղային նյութեր	583.5		
Այլ մեքենա սարք.	114.6		200.0
Դրամական միջոցների մնացորդ տարեվերջին	1618.7	62.8	0

